ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

21 .02. 2024 թ. *ք. Իջևան*

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա.Ալեքսանյանը, Գ.Սիրոյանը, Գ.Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա.Պոտոսյանը, Ա.Մուրադյանը, Ա.Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, ՈՒԳ նախագահ Ի. Բադիրյանը, Հ. Սանթրոսյանը, Զ. Հարությունյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):*
2. *ԿԾ պատասխանատուների առաջին կիսամյակի հաշվետվության ներկայացման մասին (զեկ. Գ. Սիրոյան, Թ. Վարդանյան):*
3. *Մագիստրոսական թեզերի թեմաների ցանկի բաշխվածության հաստատումն ըստ ուսանողների և ղեկավարների(զեկ.)*
4. *Ընթացիկ հարցեր.*

   4.1 «Ֆինանսներ» մասնագիտության հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակն ըստ ղեկավարների եվ ուսանողների հաստատելու մասին(զեկ. Գ. Սիրոյան)

4.2 «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական կուրսում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների վերահաստատված թեմաների մասին(զեկ. Գ. Հովհաննիսյան)

1. ***Լսեցին.- 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2023-2024 ուստարվա առկա համակարգով առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 148 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 91 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 57 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 95 ուսանող, 10 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /«Ֆինանսներ» ԿԾ 9,

«Զբոսաշրջություն» ԿԾ 1 ուսանող/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 90,09% : Անբավարար գնահատականներ ստացել են 53 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ 34, «Զբոսաշրջություն» ԿԾ 19 ուսանող/:

Ա. Մարգարյանը նշեց, որ գնահատման նոր կարգի համաձայն մինչև առաջին լուծարքային շրջան կան ուսանողներ, ովքեր ունեն դասընթացի կրկնության անհրաժեշտություն:

Դեկանի պաշտոնակարը հաղորդեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2023-2024 ուստարվա հեռակա համակարգով առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 211 ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 121 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 90 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 64ուսանող:

Հեռակա ուսուցմամբ առաջին լուծարքից հետո Ֆինանսներ I կուրսում առաջադիմությունը կազմում է 100%, II՝ 37,8%, III՝ 47,7%, IV՝ 53,8%, V՝ 57,9%:

Առաջին լուծարքից հետո բացարձակ առաջադիմությունը կազմել է 51,2%:

Դեկանը նշեց, որ զբոսաշրջություն մասնագիտությամբ սովորողների առաջադիմությունը լուծարքից հետո ավելի գոհացնող է և ունի հետևյալ պատկերը.

Զբոսաշրջություն I՝ 100%, II՝ 55%, III՝ 66,7%, IV՝ 54,5%, V՝ 60%: Բացարձակ առաջադիմությունը կազմում է 69,2%:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- ԿԾ պատասխանատուների առաջին կիսամյակի հաշվետվության ներկայացման մասին (զեկ. Գ. Սիրոյան, Թ. Վարդանյան):***

ԿԾ պատասխանատուները հաղորդեցին, որ առաջին կիսամյակում աշխատանքները իրականացվել են ըստ նախապես սահմանված ժամանակացույցի և աշխատանքային պլանի: Բոլոր աշխատանքները միտված են որակյալ կրթության ապահովմանը: Առաձնակի ուշադրություն է դարձվել այն դասընթացներին, որոնք ունեն հետազոտական բաղադրիչ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- ԿԾ պատասխանատուների առաջին կիսամյակի հաշվետվության հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին – *Մագիստրոսական թեզերի թեմաների ցանկի բաշխվածության հաստատումն ըստ ուսանողների և ղեկավարների(զեկ.Գ. Սիրոյան)*

Գ. Սիրոյանը ներկայացրեց, որ 2023-2024 ուստարում «Գործարար վարչարարություն (Կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրով սովորողների համար նախատեսված մագիստրոսական թեզերը: Նա նշեց, որ ամբիոնային քննարկման արդյունքում ընտրվել են մագիտրոսական թեզեր: Նախատեսված թեզերի նախագծերն բաշխվել են ըստ դասախոսների և ուսանողների՝ կարգով սահմանված ժամկետներում:

Արտահայտվեց.- Ա. Մուրադյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Հաստատել մագիստրոսական թեզերի թեմաների ցանկը՝ բաշխված ըստ ուսանողների և ղեկավարների:

4. Ընթացիկ հարցեր

4.1 Լսեցին.- «Ֆինանսներ» մասնագիտության հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների բաշխված ցուցակն ըստ ղեկավարների եվ ուսանողների հաստատելու մասին(զեկ. Գ. Սիրոյան)

Գ. Սիրոյանը նշեց, որ 2022 թ. Դ. Դովլաթբեկյանը և Ն. Ազիզբեկյանն ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել է անբավարար գնահատական: Նրանք դիմել են այս տարի ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցելու համար:

Դ. Դովլաթբեկյանի ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը մնում է նույնը, իսկ Ն. Ազիզբեկյանի ղեկավարը փոխվել է, քանի որ նախկին ղեկավարը չի աշխատում մասնաճյուղում:

Որոշեցին. - վերահաստատել Կ. Դովլաթբեկյանի ավարտական աշխատանքի թեման՝ «Շուկայավարությունը որպես ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման միջոց» (ղեկավար՝ Ա. Սարիբեկյան):

Վերահաստատել Ն. Ազիզբեկյանի ավարտական աշխատանքի թեման՝

«Դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» և նոր ղեկավար նշանակել Լ. Մինասյանին:

Վերահաստատված թեմաներն ներկայացնել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

4.2. «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական կուրսում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների վերահաստատված թեմաների մասին(զեկ. Գ. Հովհաննիսյան)

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգում վերականգնված ուսանողներն ուսուցում ընհատելու պատճառով չեն կարողացել պաշտպանել իրենց ավարտական աշխատանքները:

Լիա Ադամյանը և Մանե Գրիգորյանը դիմել են այս տարի ավարտական աշխատանքները պաշտպանելու համար:

Ավարտական աշխատանքներն ու ղեկավարները մնում են նույնը:

Որոշեցին.- Հաստատել «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական կուրսում վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքները.

Ադամյան Լիայի ավարտական աշխատանքի թեման՝ «Ներքին զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման հեռանկարները Տավուշի մարզում»(ղեկ.պ.գ.թ., դոցենտ Ռ. Օհանջանյան)

Գրիգորյան Մանե՝ «Տավուշի մարզի բնական հուշարձանները որպես զբոսաշրջության զարգացման նախադրյալ»(ղեկ. ա.գ.թ. Գ. Հովհաննիսյան):

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան